ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.02. 02-3

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

29.01.2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրեն Է. Պետրոսյանի, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրի շրջանակներում «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ»ՊՈԱԿ-ի միջին տարեկան 88 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն պարտավորվում է Կատարողի միջոցով վճարել կրթաթոշակ, որը կազմում է մինչև 5 016 000 (հինգ միլիոն տասնվեց հազար) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3. Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2	Ք.Գյումրի, Մանուշյան 4-րդ թաղ.
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900011034270	Հ/Հ 900218000777
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ն. Հարությունյան	_____ Է. Պետրոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ